ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 17 անդամներ:

Բացակա էին՝ Արմեն Խաչատրյանը, Կարո Կարապետյանը, Արսեն Հակոբյանը, Հովհաննես Հարությունյանը, Կարեն Ղազարյանը, Սամվել Մալխասյանը, Գեվորգ Մանուկյանը, Դավիթ Մուրադյանը, Սիմոն Պետրոսյանը, Ավագ Վարդանյանը

<u>Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝</u>
Կարեն Քենդրջյան, Արմեն Բաղդասարյան, Մուշեղ Հակոբյան, Շուշան Խանոյան, Ռաֆիկ Վարդանյան, Արգամ Զաքարյան, Կարեն Պողոսյան, Անի Վարդազարյան, Հովիկ Կարապետյան, Վահագն Համբարձումյան, Լյուդվիգ Ստեփանյան, Կարինե Աբրահամյան, Լուսինե Պողոսյան, Մերի Մկրտչյան

<u>Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Ասլան Ավետիսյանը</u>

<u>Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Արթուր Մուսիկյանը</u>

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊՈՂՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 83-րդ հոդվածի 2-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի և 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով. ***Արարատ համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի 2025 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածների, որից
1) եկամուտների գծով՝ 2.589.864,9 հազար դրամ:
2) ծախսերի գծով՝ 2.589.864,9 հազար դրամ:
3) դեֆիցիտը (պակասուրդը)՝ 0 դրամ:
2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները՝ համաձայն հավելված 1-ի:
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման՝ համաձայն հավելված 2-ի:
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հավելված 3-ի:
5. Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝ համաձայն հավելված 4-ի:
6. Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունների կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները՝ համաձայն հավելված 5-ի:

7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հավելված 6-ի:
8. Սահմանել՝ համայնքի ղեկավարի կատարած փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել տվյալ տարվա բյուջեի 15%-ը:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025թ. հունվարի 1-ից:

Կողմ-13 Դեմ-2 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 258-Ն/

Լսեցին
ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 12 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով՝ ***Արարատ համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հաստատել նիստի հետևյալ օրակարգը.
1) Արարատ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 12 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:
2)Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի ավագանու նիստերի հրավիրման 2025 թվականի ժամանակացույցը հաստատելու մասին:
3)Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 19-ի N 3 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
4)Կարբոնատ ՍՊԸ-ի կողմից Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի արդյունահանման աշխատանքներին նախնական համաձայնություն տալու մասին:
5)Կարբոնատ ՍՊԸ-ի կողմից Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրում երկրաբանահետախուզական աշխատանքներին նախնական համաձայնություն տալու մասին:
6)Մագնոլիա Կոմֆորտ 2 ՓԲ-ի կողմից Արարատ համայնքի Զովեր-1 տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներին նախնական համաձայնություն տալու մասին:
7)Համայնքային սեփականություն հանդիսացող վարձակալությամբ տրամադրված 0,002հա մակերեսով հողատարածքը ուղղակի վաճառքի կարգով օտարելու մասին:
8)Համայնքային սեփականություն հանդիսացող վարձակալությամբ տրամադրված 0,91187հա մակերեսով հողատարածքը ուղղակի վաճառքի կարգով օտարելու մասին:
9)Զորիկ Հարությունի Հովհաննիսյանի սեփականություն հանդիսացող շինության հողատարածքի ընդլայնման նպատակով հողատարածք հատկացնելու մասին:
10)Արարատ համայնքի Սուրենավան բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 03-086-0001-0023 կադաստրային ծածկագիրը կրող 0,0801հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողը աճուրդ վաճառքի կարգով օտարելու մասին:
11)Արարատ համայնքի Երասխ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 03-042-0005-0012 կադաստրային ծածկագիրը կրող 0,13174հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը աճուրդ վաճառքի կարգով օտարելու մասին:
12)Արարատ համայնքի Երասխ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 03-042-0027-0001 կադաստրային ծածկագիրը կրող 0,3872հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը աճուրդ վաճառքի կարգով օտարելու մասին:
13)Արարատ համայնքի Պարույր Սևակ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 03-078-0006-0022 կադաստրային ծածկագիրը կրող 0,10594հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը աճուրդ վաճառքի կարգով օտարելու մասին:
14) Արարատ համայնքի Ուրցալանջ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 03-094-0139-0022 կադաստրային ծածկագիրը կրող 1,05135հա մակերեսով արոտավայրը վարձակալությամբ տրամադրելու մասին:
15)Համայանքային սեփականություն հանդիսացող վարձակալությամբ տրամադրված 0,0047հա մակերեսով հողատարածքը ուղղակի վաճառքի կարգով օտարելու մասին:

16) Արտաբյուջետային հաշիվ բացելու թուլտվություն տալու մասին:
17)Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի 2025թվականի բյուջեն հաստատելու մասին:
18)Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի 2024թվականի բյուջեի եկամտային և ծախսային մասերի հոդվածներում փոփոխություն կատարելու մասին:
19) Անշարժ գույքի վարձակալության պայմանագրերի ժամկետները երկարաձգելու մասին:
20) Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի 2024թ. գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 241-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ ՀՐԱՎԻՐՄԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ԱՐԹՈՒՐ ՄՈՒՍԻԿՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջներով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով,***համայնքի ավագանին որոշում է.***

1.2025 թվականին Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի ավագանու հերթական նիստերը հրավիրել՝

2025թ. փետրվարի 14-ին
2025թ. մարտի 14-ին
2025թ. ապրիլի 11-ին
2025թ. մայիսի 16-ին
2025թ. հունիսի 20-ին
2025թ. սեպտեմբերի 12-ին
2025թ. հոկտեմբերի 17-ին
2025թ.նոյեմբերի 14-ին
2025թ. դեկտեմբերի 19-ին
2.Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածի, համայնքի ղեկավարը կամ նրա պաշտոնակատարը՝ իր կամ ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ, անհրաժեշտության դեպքում, կարող է հրավիրել ավագանու արտահերթ նիստ:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 242-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի N 3 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ԱՐԹՈՒՐ ՄՈՒՍԻԿՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով, հաշվի առնելով որոշ ավագանու անդամների լիազորությունների դադարեցման փաստը՝ ***Արարատ համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի ավագանու 2022թվականի հունվարի 19-ի «Արարատ համայնքի ավագանու մշտական գործող հանձնաժողովներ ստեղծելու և դրանց անհատական կազմերը հաստատելու մասին» N 3 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություն՝
1) Որոշման 1-ին կետի 1.1 ենթակետում «Եվա Դեմիրճյան» բառերը փոխարինել «Ծովինար Ալեքսանյան» բառերով, «Հրանուշ Հակոբյան» բառերը՝ «Արտակ Մելիքյան» բառերով և ասյուհետ որոշման 1-ին կետի 1.1 ենթակետը շարադրել հետևյալ կերպ՝
1.1 Գիտության, կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի մշտական գործող հանձնաժողով.
Աղախանյան Լուսինե
Կարեն Ադամյան
Ծովինար Ալեքսանյան
Լարիսա Թունյան
Արտակ Մելիքյան
2) Որոշման 1-ին կետի 1.2 ենթակետից հանել «Մկրտիչ Մարտիրոսյան» բառերը, «Վարուժան Հարոյան» բառերը՝ «Գայանե Հակոբյան» բառերով և ասյուհետ որոշման 1-ին կետի 1.2 ենթակետը շարադրել հետևյալ կերպ՝
1.2 Ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական գործող հանձնաժողով՝
Գայանե Հակոբյան
Գեղամ Սինանյան
Գևորգ Մանուկյան
Գարեգին Լևոնյան
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 243-Ա/

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ 2024Թ. ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԲԿԵՆ ԲԱԲԱՅԱՆ/

Համաձայն Արարատ համայնքի ղեկավարի 2024թ. հոկտեմբերի 2-ի թիվ 194-Ա և 2024 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 233-Ա կարգադրությունների, գույքագրող հանձնաժողովը կատարել է համայնքապետարանում, համայնքի կազմում ընդգրկված վարչական տարածքներում և ենթակա կազմակերպություններում առկա համայնքային սեփականություն հանդիսացող գույքի ամենամյա գույքագրում: Գույքագրման արդյունքում ճշտվել և հաշվառվել են համայնքի սեփականություն հանդիսացող հիմնական միջոցները, արագամաշ, մանրարժեք գույքն ու առարկաները: Մանրարժեք գույքի մի մասը հետագա օգտագործման պիտանի չէ: Բոլոր կազմակերպություններում հիմնական միջոցները և արագամաշ գույքը նորացման կարիք ունի:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի և 77-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով, ինչպես նաև համայնքի ավագանու Կանոնակարգով. ***ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝***

1.Հաստատել համայնքային սեփականություն հանդիսացող գույքի 2024թ. գույքագրման փաստաթղթերը ըստ կազմակերպությունների՝ Արարատի համայնքապետարան, Արարատ, Ավշար, Արմաշ, Նոյակերտ, Սուրենավան, Զանգակատուն և Վարդաշատ, Երասխ, Պարույր Սևակ, Ուրցալանջ և Լանջառ բնակավայրերի վարչական տարածքներ, «Արարատ համայնքի Արարատ քաղաքի թիվ 1 մսուր-մանկապարտեզ, Մովսես Գորգիսյանի անվան թիվ 2 մսուր-մանկապարտեզ,Արարատ քաղաքի թիվ 3 մանկապարտեզ, Արարատ քաղաքի թիվ 4 մանկապարտեզ», «Արարատ քաղաքի Ղ.Սարյանի անվան ՄՄԱԴ», «Արարատ քաղաքի մարզադպրոց», «Արարատ քաղաքի մշակույթի և արվեստի կենտրոն» ՀՈԱԿ-ներ, «Արարատ համայնքի կոմունալ ծառայություն» ԲՀ, «Արարատ համայնքի Արարատ գյուղի մսուր-մանկապարտեզ, Արարատ համայնքի Արմաշ գյուղի մանկապարտեզ, Արարատ համայնքի Սուրենավան գյուղի մանկապարտեզ, Արարատ համայնքի Նոյակերտ գյուղի մանակապարտեզ, Արարատ համայնքի Երասխ գյուղի մանկապարտեզ, Արարատ համայնքի Զանգակատուն գյուղի մանակապարտեզ, Արարատ համայնքի Պարույր Սևակ գյուղի մանկապարտեզ, Ավշար գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ներ: /Հավելվածներ 1-26 կցվում են:
2.Թույլատրել ենթակա կազմակերպությունների տնօրեններին՝
2.1 Համապատասխան հանձնաժողովների միջոցով դուրս գրել գույքագրման արդյունքում հաշվառված, օգտագործման համար ոչ պիտանի արագամաշ, մանրարժեք գույքը:
2.2 Համապատասխան լիցենզավորված մասնագետների միջոցով ուսումնասիրել գույքագրող հանձնաժողովների կողմից հաշվառված, հետագա օգտագործման համար ոչ պիտանի հիմնական միջոցների

բոլոր դետալները, որոշել դրանց օգտագործման պիտանելիության աստիճանը, գնահատել և անհրաժեշտության դեպքում օտարել:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 259-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2024ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԵՐԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊՈՂՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, ***Արարատ համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 225-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն որոշմամբ հաստատված թիվ 1,2,3 հավելվածների:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 257-Ն/

Լսեցին
ԿԱՐԲՈՆԱՏ ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ԱՐԱՐԱՏԻ ՏՐԱՎԵՐՏԻՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՎԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՄՈՒՍԻԿՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N 2343-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով 2024 թվականի նոյեմբերի 26-ին Արարատ համայնքում «ԿԱՐԲՈՆԱՏ » ՍՊԸ-ի կողմից անցկացված հանրային քննարկման առաջին փուլի արձանագրությունը,***Արարատ համայնքի ավագանին որոշում է.***

Տալ նախնական համաձայնություն «ԿԱՐԲՈՆԱՏ » ՍՊԸ-ի կողմից Արարատ համայնքի Ավշար բնակավայրի վարչական տարածքում,Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի «ԿԱՐԲՈՆԱՏ» տեղամասի կենտրոնական մասում արդյունահանման աշխատանքներին:

Կողմ-13 Դեմ-1 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 244-Ա/

Լսեցին
ԿԱՐԲՈՆԱՏ ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ԱՐԱՐԱՏԻ ՏՐԱՎԵՐՏԻՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՎԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐՈՒՄ ԵՐԿՐԱԲԱՆԱՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՄՈՒՍԻԿՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N 2343-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով 2024 թվականի նոյեմբերի 26-ին

Արարատ համայնքում «ԿԱՐԲՈՆԱՏ » ՍՊԸ-ի կողմից անցկացված հանրային քննարկման առաջին փուլի արձանագրությունը,***Արարատ համայնքի ավագանին որոշում է.***

Տալ նախնական համաձայնություն «ԿԱՐԲՈՆԱՏ » ՍՊԸ-ի կողմից Արարատ համայնքի Ավշար բնակավայրի վարչական տարածքում,Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի «ԿԱՐԲՈՆԱՏ» տեղամասի թևերում երկրաբանահետախուզական աշխատանքներին:

Կողմ-13 Դեմ-2 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 245-Ա/

Լսեցին
ՄԱԳՆՈԼԻԱ ԿՈՄՖՈՐՏ 2 ՓԲԸ-Ի ԿՈՂՄԻՑ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՈՎԵՐ -1 ՏԵՂԱՄԱՍՈՒՄ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՄՈՒՍԻԿՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2343-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով 2024 թվականի նոյեմբերի 29-ին Արարատ համայնքում «ՄԱԳՆՈԼԻԱ ԿՈՄՖՈՐՏ» ՓԲԸ-ի կողմից անցկացված հանրային քննարկման առաջին փուլի արձանագրությունը, ***Արարատ համայնքի ավագանին որոշում է.***

Տալ նախնական համաձայնություն «ՄԱԳՆՈԼԻԱ ԿՈՄՖՈՐՏ» ՓԲԸ-ի կողմից Արարատ համայնքի Արարատ գյուղի Զովեր-1 ավազակոպճային խառնուրդի երևակման տարածքի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներին:

Կողմ-13 Դեմ-3 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 246-Ա/

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ 0.002 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՄՈՒՍԻԿՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով,Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ, 56-րդ հոդվածի 5-րդ, 66-րդ հոդվածի 4-րդ կետով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով և հիմք ընդունելով քաղաքացի՝ Գրետա Հարությունյանին վարձակալության իրավունքով տրամադրված 03-002-0015-0055 կադաստրային ծածկագիրը կրող 0.002 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման հողամասը իրեն օտարելու մասին դիմումը,***համայնքի ավագանին որոշում է.***

1.Քաղաքացի՝ Գրետա Հարությունյանին վարձակալության իրավունքով տրամադրված համայնքային սեփականություն հանդիսացող,Արարատ քաղաքի Ե.Չարենցի 2/13 հասցեում գտնվող , 03-002-0015-0055 կադաստրային ծածկագիրը կրող 0.002 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի կարգով օտարել նրանց:
2.Հողամասի օտարման գին սահմանել 2500 ՀՀ դրամ 1քմ-ի համար:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 247-Ա/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ 0.91187 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՄՈՒՍԻԿՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով,Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ, 56-րդ հոդվածի 5-րդ, 66-րդ հոդվածի 4-րդ կետով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով և հիմք ընդունելով քաղաքացի՝ Գևորգ Ալոյանին վարձակալության իրավունքով տրամադրված 03-086-0002-0014 կադաստրային ծածկագիրը կրող 0.91187 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության կորիզավոր հողամասը իրենցօտարելու մասին դիմումը,***համայնքի ավագանին որոշում է.***

1.Քաղաքացի՝ Գևորգ Ալոյանին վարձակալության իրավունքով տրամադրված համայնքային սեփականություն հանդիսացող,Արարատ համայնքի Սուրենավան բնակավայրի վարչական տարածքում գտնվող , 03-086-0002-0014 կադաստրային ծածկագիրը կրող 0.91187 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության կորիզավոր հողամասը գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի կարգով օտարել նրանց:
2.Հողամասի օտարման գին սահմանել 900000 ՀՀ դրամ:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 248-Ա/

Լսեցին

ՋՈՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՐԱՉ ԴԱՎԹՅԱՆ/

Քաղաքացի ՝Զորիկ Հարությունի Հովհաննիսյանը Արարատ համայնք, քաղաք Արարատ Ե.Չարենցի փողոց 4/5 հասցեում /ծածկագիր՝ 03-002-0015-0141/ ունի սեփականության իրավունքով իրեն պատկանող 0,00844 հա մակերեսով հասարակական կառուցապատման հողատարածք և վրան գտնվող շինություն: Նշված շինության ետնամասում առկա է ազատ տարածք, որը չի օգտագործվում այլ անձանց կողմից: Քաղաքացին դիմել է համայնքապետարան՝ նշված տարածքը սեփականության իրավունքով, հասարակական շինության ընդլայնման նպատակով, հողատարածքը՝ կադաստրային արժեքով իրեն օտարելու խնդրանքով: Ղեկավարվելով ՀՀ կառավարության 08.05.2003 թիվ 714-Ն որոշմամբ, ՀՀ «Հողային օրենսգրքի» 66-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, ՀՀ կառավարության 26.05.2016թ. թիվ 550-Ն որոշման 2-րդ կետի պահանջներով և նկատի ունենալով, որ քաղաքացի ՝Զորիկ Հարությունի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող,03-002-0015-0141 ծածկագիրը կրող 0.00844 հա մակերեսով հասարակական կառուցապատման հողամասին կից ազատ, չկառուցապատված, համայնքային սեփականություն հանդիսացող 0.00048 հա մակերեսով հողատարածքը /ծածկագիր՝ 03-002-0015-0142/ չի գտնվում ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, ինչպես նաև հնարավոր չէ հողամասը որպես առանձին գույքային միավոր օտարել աճուրդային կարգով, քանի որ օտարվող հողամասը սահմանակից է ընդլայնվող հողամասին և օտարվող հողամասի դիրքից և չափերից ելնելով քաղաքաշինական նորմերին համապատասխան, այն կարող է օգտագործվել բացառապես ընդլայնվող հողամասի վրա գտնվող շինության սպասարկման կամ վերակառուցման,

ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների իրականացման նպատակով,առաջնորդվելով համայնքի ավագանու կանոնակարգով,***ավագանին որոշում է՝***

Բավարարել քաղաքացի՝ Զորիկ Հարությունի Հովհաննիսյանի խնդրանքը և Արարատ համայնք, քաղաք Արարատ Ե.Չարենցի փողոց 4/7 հասցեում գտնվող, իրեն սեփականության իրավունքով պատկանող հասարակական կառուցապատման հողատարածքին հարակից 0.00048 հա մակերեսով ազատ, չկառուցապատված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը, 1քմ-ի համար 5000 ՀՀ դրամ վճարով, ուղղակի վաճառքի կարգով օտարել նրան՝ Զորիկ Հարությունի Հովհաննիսյանին:
2. Հողամասի ուղղակի վաճառքի կարգով օտարման գործընթացը կազմակերպել սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից 1 տարվա ընթացքում:
3. Պարտավորեցնել քաղաքացուն՝ տարածքում շինարարական կամ բարեկարգման աշխատանքները կատարել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և քաղաքաշինական գործող նորմերով:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 249-Ա/

Լսեցին
ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 03-086-0001-0023 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐԸ ԿՐՈՂ 0.0801 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՄՈՒՍԻԿՅԱՆ/

Համաձայն տեղազննության արդյունքների,Արարատ համայնքի Սուրենավան բնակավայրի վարչական տարածքում գտնվող,/ծածկագիր՝ 03-086-0001-0023/ համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.0801 հա մակերեսով վարելահողը ենթակա է աճուրդ վաճառքով օտարելու և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 67-րդ և 68-րդ հոդվածներով,առաջնորդվելով ավագանու կանոնակարգով,***համայնքի ավագանին որոշում է.***

1.Աճուրդ վաճառքով օտարել Արարատ համայնքի Սուրենավան բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 03-086-0001-0023 կադաստրային ծածկագիրը կրող 0.0801 հա մակերեսով,համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահողը.
2.Նշված տարածքի օտարման մեկնարկային գին սահմանել 300000 ՀՀ դրամ, նախավճար սահմանել մեկնարկային գնի 50 %-ի չափով, մասնակցության վճար՝ 5000 դրամ, աճուրդային քայլի չափը մեկնարկային գնի 5%չափով:
3.Համայնքի ղեկավարին՝ աճուրդ վաճառքի հետ կապված աշխատանքները կազմակերպել սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից 1 տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության«Հողային օրենսգրքի» և գործող նորմատիվ ակտերի պահանջներին համապատասխան:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 250-Ա/

Լսեցին

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԱՍԽ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 03-042-0005-0012 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐԸ ԿՐՈՂ 0.13174 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՄՈՒՍԻԿՅԱՆ/

Համաձայն տեղազննության արդյունքների,Արարատ համայնքի Երասխ բնակավայրի վարչական տարածքում գտնվող,/ծածկագիր՝ 03-042-0005-0012/ համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.13174 հա մակերեսով այլ հողամասը ենթակա է աճուրդ վաճառքով օտարելու և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 67-րդ և 68-րդ հոդվածներով,առաջնորդվելով ավագանու կանոնակարգով,***համայնքի ավագանին որոշում է.***

1.Աճուրդ վաճառքով օտարել Արարատ համայնքի Երասխ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 03-042-0005-0012 կադաստրային ծածկագիրը կրող 0.13174 հա մակերեսով,համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը.
2.Նշված տարածքի օտարման մեկնարկային գին սահմանել 75000 ՀՀ դրամ, նախավճար սահմանել մեկնարկային գնի 50 %-ի չափով, մասնակցության վճար՝ 5000 դրամ, աճուրդային քայլի չափը մեկնարկային գնի 5%չափով:
3.Համայնքի ղեկավարին՝ աճուրդ վաճառքի հետ կապված աշխատանքները կազմակերպել սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից 1 տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության«Հողային օրենսգրքի» և գործող նորմատիվ ակտերի պահանջներին համապատասխան:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-4

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 251-Ա/

Լսեցին

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԱՍԽ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 03-042-0027-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐԸ ԿՐՈՂ 0.3872 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՄՈՒՍԻԿՅԱՆ/

Համաձայն տեղազննության արդյունքների,Արարատ համայնքի Երասխ բնակավայրի վարչական տարածքում գտնվող,/ծածկագիր՝ 03-042-0027-0001/ համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.3872 հա մակերեսով այլ հողամասը ենթակա է աճուրդ վաճառքով օտարելու և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 67-րդ և 68-րդ հոդվածներով,առաջնորդվելով ավագանու կանոնակարգով, ***համայնքի ավագանին որոշում է.***

1.Աճուրդ վաճառքով օտարել Արարատ համայնքի Երասխ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 03-042-0027-0001 կադաստրային ծածկագիրը կրող 0.3872 հա մակերեսով,համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը.
2.Նշված տարածքի օտարման մեկնարկային գին սահմանել 200000 ՀՀ դրամ, նախավճար

սահմանել մեկնարկային գնի 50 %-ի չափով, մասնակցության վճար՝ 5000 դրամ, աճուրդային քայլի չափը մեկնարկային գնի 5%չափով:
3.Համայնքի ղեկավարին՝ աճուրդ վաճառքի հետ կապված աշխատանքները կազմակերպել սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից 1 տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության«Հողային օրենսգրքի» և գործող նորմատիվ ակտերի պահանջներին համապատասխան:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-4

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 252-Ա/

Լսեցին
ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 03-078-0006-0022 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐԸ ԿՐՈՂ 0.10594 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՐԱՉ ԴԱՎԹՅԱՆ/

Համաձայն տեղազննության արդյունքների, Արարատ համայնքի Պարույր Սևակ բնակավայրի 4-րդ փողոց 27 հասցեում գտնվող, /ծածկագիր՝ 03-078-0006-0022/ համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 0.10594 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը ենթակա է աճուրդ վաճառքով օտարելու և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 67-րդ և 68-րդ հոդվածներով, առաջնորդվելով ավագանու կանոնակարգով, ***համայնքի ավագանին որոշում է.***

1.Աճուրդ վաճառքով օտարել Արարատ Պարույր Սևակ բնակավայրի 4-րդ փողոց 27 հասցեում գտնվող, 03-078-0006-0022 կադաստրային ծածկագիրը կրող 0.10594 հա մակերեսով,համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը.
2.Նշված տարածքի օտարման մեկնարկային գին սահմանել 350 ՀՀ դրամ 1քմ-ի համար, նախավճար սահմանել մեկնարկային գնի 50 %-ի չափով, մասնակցության վճար՝ 5000 դրամ, աճուրդային քայլի չափը մեկնարկային գնի 5%չափով:
3.Համայնքի ղեկավարին՝ աճուրդ վաճառքի հետ կապված աշխատանքները կազմակերպել սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից 1 տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» և գործող նորմատիվ ակտերի պահանջներին համապատասխան:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 253-Ա/

Լսեցին
ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒՐՑԱԼԱՆՋ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 03-094-0139-0022 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐԸ ԿՐՈՂ 1.05135 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՄՈՒՍԻԿՅԱՆ/

Համաձայն տեղազննության արդյունքների,Արարատ համայնքի Ուրցալանջ բնակավայրի վարչական տարածքում գտնվող,համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության /ծածկագիր 03-094-0139-0022/ 1.05135 հա մակերեսով արոտավայրը ենթակա է մրցույթով վարձակալության տրամադրելու և ղեկավարվելով

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 48-րդ և 76-րդ հոդվածների պահանջներով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով,***համայնքի ավագանին որոշում է՝***

Ուրցալանջ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 03-094-0139-0022 կադաստրային ծածկագիրը կրող 1.05135 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրը:
2.Նշված հողատարածքի վարձավճարի մեկնարկային գին սահմանել 10000 ՀՀ դրամ 1 հա-ի համար, նախավճար սահմանել մեկնարկային գնի 5 %-ի չափով,մասնակցության վճար՝5000 ՀՀ դրամ,մրցութային քայլի չափը մեկնարկային գնի 5%-ի չափով:
3.Համայնքի ղեկավարին՝ մրցույթի հետ կապված աշխատանքները կազմակերպել սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից 1 տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» և գործող նորմատիվ ակտերի պահանջներին համապատասխան:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 254-Ա/

Լսեցին
ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊՈՂՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասի՝ ***Արարատ համայնքի ավագանին որոշում է***

1. Թույլատրել Արարատ համայնքի անվամբ բացել արտաբյուջետային հաշիվ՝ Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Ռեսթորֆոլայֆ» ծրագրի շրջանակներում Արարատ համայնքի Արմաշ բնակավայրում աղի ճահճային տարածքների վերականգնում, պահպանում և թռչնադիտարկման զբոսաշրջության զարգացմանն ուղղված աշխատանքները իրականացնելու համար:

Կողմ-12 Դեմ-2 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 256-Ա/

Լսեցին
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ 3.1 ԿԵՏՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՏԱԿ ՁԱՔԱՐՅԱՆ/

Արարատ համայնքի սեփականությանն է փոխանցվել ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի գ.Ավշար բնակավայրի Շիրազի փողոց 1/1 և Շիրազի փողոց 2 հասցեներում գտնվող անշարժ գույքերը: Նշված անշարժ գույքերը վարձակալության իրավունքով տրամադրված են «Արարատ» ջրօգտագործողների ընկերությանը:
Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 619-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, հաշվի առնելով, որ վարձակալության հանձնված գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չէ վարձակալության պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու համար և հիմք ընդունելով «Արարատ» ջրօգտագործողների ընկերության տնօրենի գրությունը. ***Արարատ համայնքի ավագանին որոշում է***

1. Ընդունել ի գիտություն 18.08.2023 թվականի թիվ 3501 և 3502 անշարժ գույքի վարձակալության գործող պայմանագրերը:
2. Մինչև 2029 թվականի դեկտեմբերի 20-ը երկարաձգել 18.08.2023 թվականի թիվ 3501 և 3502 անշարժ գույքի վարձակալության պայմանագրերի ժամկետները:
3.18.08.2023 թվականի թիվ 3501 և 3502 անշարժ գույքի վարձակալության պայմանագրերի 3.1 կետում կատարել փոփոխություն՝ հանելով «ներառյալ հարկը» բառակապակցությունը.
1) թիվ 3501 պայմանագրի 3.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3.1 Վարձավճարի չափը կազմում է ամսեկան 115000 / մեկ հարյուր տասնհինգ հազար/ ՀՀ դրամ, որը վարձակալը պարտավոր է փոխանցել վարձատուի հաշվին մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20 /քսանը/»:
2) թիվ 3502 պայմանագրի 3.1 կետը հետևյալ խմբագրությամբ.
«3.1 Վարձավճարի չափը կազմում է ամսեկան 445000 /չորս հարյուր քառասունհինգ հազար/ ՀՀ դրամ, որը վարձակալը պարտավոր է փոխանցել վարձատուի հաշվին մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20 /քսանը/»:
4.Համայնքի ղեկավարին՝ «Արարատ» ջրօգտագործողների ընկերության հետ կնքել համաձայնագրեր 18.08.2023 թվականի թիվ 3501 և 3502 անշարժ գույքի վարձակալության պայմանագրերի ժամկետները երկարաձգելու և 3.1 կետում համապատասխան փոփոխություն կատարելու վերաբերյալ՝ վարձակալության պայմանագրերի մյուս պայմանները թողնելով անփոփոխ:

Կողմ-12 Դեմ-1 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 260-Ա/

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ 0.0047 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՄՈՒՍԻԿՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով,Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ, 56-րդ հոդվածի 5-րդ, 66-րդ հոդվածի 4-րդ կետով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով և հիմք ընդունելով քաղաքացի՝ Սեդրակ Խանոյանին վարձակալության իրավունքով տրամադրված 03-015-0025-0078 կադաստրային ծածկագիրը կրող 0.0047 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի այլ հողամասը իրեն օտարելու մասին դիմումը,***համայնքի ավագանին որոշում է.***

1.Քաղաքացի՝ Սեդրակ Խանոյանին վարձակալության իրավունքով տրամադրված համայնքային սեփականություն հանդիսացող,Արարատ գյուղի Գրիբոյեդովի փողոց 121/1 հասցեում գտնվող , 03-015-0025-0078 կադաստրային ծածկագիրը կրող 0.0047 հա մակերեսով բնակավայրերի այլ հողամասը գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի կարգով օտարել նրանց:
2.Հողամասի օտարման գին սահմանել 2500 ՀՀ դրամ 1քմ-ի համար:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 255-Ա/

Ավագանու անդամներ

ԿԱՐԵՆ ԱԴԱՄՅԱՆ

ԾՈՎԻՆԱՐ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԱՂԱԽԱՆՅԱՆ

ԱՆԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՖԻՐԴՈՒՍ ՁԱՔԱՐՅԱՆ

ԼԱՐԻՍԱ ԹՈՒՆՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆ

ԱՍՊՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԳԱՅԱՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՌԻՄԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ՄԱՆՎԵԼՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄԵԼԻՔՅԱՆ

ՍԵՐԳՈ ՄԻՆԱՍՅԱՆ

ԳԵՂԱՄ ՍԻՆԱՆՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Արթուր Մելքումյան